«ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ
(2023 թ. հունիսի 21-23)
PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE
“NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH”
(June 21-23, 2023)
ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ
“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”
(21-23 июня, 2023 г.)

ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ*

DOI:10.57155/RYES3905

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ «ԱՐԵՎՈՐԴԻՆԵՐԻ ԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԹՂԹԻ

Բանալի բառեր՝ *Ս. Ներսես Շնորհալի, արևորդիներ, պավլիկյաններ, Ս. Մկրտություն, Հայոց եկեղեցի, սատանայից հրաժարում, հավատքի խոստովանություն, անդամագրություն, ինքնություն:*

Ս. Ներսես Շնորհալին միջնադարյան Հայաստանի ազգային-եկեղեցական նշանավոր գործիչներից է՝ մատենագիր, աստվածաբան, շարականագիր, բանաստեղծ, աղոթագիր, մեկնիչ, թարգմանիչ, էկումենիկ շարժման ջատագով, որի մասին ակնածանքով և գովեստով են խոսում ժամանակակիցներն ու հետագա հեղինակները՝ մեծարելով նրան «Հայոց երկրորդ Լուսավորիչ», «Տիեզերալույս վարդապետ», «Նոր Գրիգոր Աստվածաբան» և այլ պատվանուններով: Անհնար է պատկերացնել Հայոց Եկեղեցու ծիսական կյանքը, ծիսամատյաններն ու միջնադարյան հոգևոր երաժշտությունն առանց երգահան, երգիչ ու սրբազան ծեսի բարենորոգիչ Շնորհալի հայրապետի: Բազմաժանր և բազմաբովանդակ է համաքրիստոնեական այս հսկա մտածողի ու Հայոց Եկեղեցու կողմից սրբադասված հայրապետի մատենագրական ժառանգությունը, որը մեզ է հասել գրե-

* Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, hayrzakaria@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 2 սեպտեմբերի 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ 10 դեկտեմբերի 2023:

թե անկորուստ, բազմիցս տպագրվել, վերահրատարակվել և թարգմանվել օտար լեզուներով[1]: Նրա երկերում արտահայտված են ժամանակի եկեղեցական-քաղաքական կացությունը, հայոց պետականության և Ազգային Եկեղեցու գաղափարախոսությունը, ներեկեղեցական և միջեկեղեցական խնդիրների ամբողջական պատկերը, ուղղափառ դավանանքի, Սրբազան Ավանդության իմացության շեշտադրումները, հասարակության տարբեր խավերին հուզող հոգևոր և մարմնավոր խնդիրները, կենցաղն ու մարդկային հարաբերությունները:

Հայ միջնադարյան վավերագրերի ուսումնասիրման և ժամանակի խնդիրների, հարցերի պարզաբանման տեսանկյուններից արժեքավոր են նաև Շնորհալու նամակների ժողովածուները, որոնք մեծավ մասամբ գրվել են հեղինակի կաթողիկոսության շրջանում (1166-1173): Արձակ այս գործերը վերաբերում են Եկեղեցիների միության մասին Ս. Ներսես Շնորհալու տեսլականին և մոտեցումներին, դավանաբանական, տոնածիսական զանազան խնդիրների, ծիսական և ժողովրդական ավանդույթներին, հոգևոր ու բարոյախրատական հարցերի: Ս. Ներսես կաթողիկոսի ուշագրավ երկերից է «Յաղագս արևորդեացն դարձի» խորագրով թուղթը, որն այս աղանդի մասին պահպանված եզակի սկզբնաղբյուրներից է հայ մատենագրության մեջ[2]:

Յավոք, քիչ բան է հայտնի արևորդիների, նրանց ուսմունքի և ծիսապաշտամունքի մասին, իսկ մեզ հասած կցկտուր տեղեկություններն անբավարար են ամբողջական և լիարժեք պատկերացում կազմելու համար: Մատենագրական սկզբնաղբյուրների համաձայն՝ այս աղանդը տարածված է եղել Բյուզանդական Միջագետքում, Կիլիկիայում և հատկապես Մանազկերտում, Ամիդում, Սամոսատում ու Մերդինում: Բացառված չէ, որ այս աղանդին են հարել նաև այդ շրջանների որոշ ասորիներ: Արևորդիների գործունեությանը քաջատեղյակ է նաև ասորիների պատրիարքը, որի մասին է գրում Ժ-ԺԱ դարի մատենագիր, փիլիսոփա և ռազմական գործիչ Գրիգոր Մագիստրոսը նրան ուղղված պատասխան նամակում. «Եւ այժմ ի նոցունց դեղեալք արեգակնապաշտքդ, զոր Արևորդիսն անուանեն. և ահա են յայդմ գաւառի բազումք և ինքեանք քրիստոնեայք զինքեանս յայտնապէս կոչեն: Բայց եթէ ո՞րպիսի մոլորութեամբ և անառակու-

[1] Նրա ողջ մատենագրական ժառանգությունը, տե՛ս *Մատենագիրք հայոց*, ԻԱ. հատոր, ԺԲ. դար, *Ներսէս Շնորհալի*, Գիրք Ա., Երևան, 2018, էջ 70-1323, հ. ԻԲ., ԺԲ. դար, *Ներսէս Շնորհալի*, Գիրք Բ., Երևան, 2022, էջ 39-925, իսկ աշխատությունների մատենագիտությունը՝ **Պողոս Խաչատրեան**, *Հայ հին գրականութեան մատենագիտութիւն*, լրացրեց և խմբագրեց ***Արշակ Բանուչեանը***, Երևան, 2016, էջ 422-429:

[2] *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., ԺԲ. դար, *Ներսէս Շնորհալի*, Գիրք Բ., Երևան, 2022, էջ 160-196:

թեամբ[3] *վարին, գիտեմք, զի ոչ ես անտեղեակ»*[4]*: Ամեն դեպքում հստակ է, որ արևորդիների աղանդը հայ իրականության մեջ լայն տարածում չի ունեցել պավլիկյանների կամ թոնդրակեցիների նման, որով էլ բացատրվում է Հայոց եկեղեցու հանդուրժող և մեղմ կեցվածքը նրանց գործունեության հանդեպ:*

Յայսօր խնդրի վերաբերյալ տպագրվել է երեք հոդված-ուսումնասիրություն՝ մեջբերելով պահպանված սկզբնաղբյուրները, և հարցը հիմնականում քննարկելով արևորդիների՝ էթնիկ կամ կրոնական պատկանելության դիտանկյուններից[5]*: Մեր նպատակն է Շնորհալու այս կարևոր թուղթը վերլուծել մեկ այլ տեսանկյունից՝ ցույց տալով, թե ինչպե՛ս է Հայոց հայրապետը պատկերացնում Հայոց Եկեղեցուն արևորդիների անդամագրությունը, ի՛նչ գործընթաց է անհրաժեշտ նրանց դարձի համար՝ վերջում հայրաբար խրատելով թե՛ քահանաներին և թե՛ Եկեղեցու նորադարձ անդամներին: Այս թղթում նույնպես նորովի բացահայտվում է նախանձախնդիր, նվիրյալ հոգևոր հայրը, որ լայնախոհությամբ, համբերատարությամբ ու սիրով բոլորին ցանկանում է համախմբել Հայոց Եկեղեցու շուրջ՝ պահպանելու ազգային դիմագիծն ու քրիստոնեական ինքնությունը: Թղթի ծիսագործնական և աստվածաբանական հատվածները մեզ հնարավորություն են տալիս նաև պատկերացում կազմելու Հայոց հայրապետի աստվածաբանական հայացքների, Հայոց Եկեղեցում գործածված Ս. Մկրտության ծեսի տվյալ ժամանակաշրջանի բնագրի, Եկեղեցու գիրկն ընդունելու ծի-*

---

3 Արևորդիների կենցաղավարության մասին Գրիգոր Մագիստրոսի խոսքերը նրանց նույնացնում են պավլիկյանների, թոդրակեցիների և մծղնեականների հետ: Այս առումով հետաքրքիր է արևորդիներին տրված ԺԱ-ԺԲ դարերի իրավագետ Դավիթ Ալավկա որդու բնորոշումը, որ պավլիկյանները և մծղնեականները նույն «արուի որդոց ազգն է», տե՛ս *The Penitential of David of Ganjak*, edited by ***C. J. F. Dowsett*** (CSCO, Vol. 216, Scriptores Armeniaci, Tomus 3), Lovanii: In Aedibus E. Peeters, 1961, p. 49, հմմտ. *Մատենագիրք Հայոց*, հ. ԺԶ., ԺԱ. դար, Երևան, 2012, էջ 701, **Հ. Ղևոնդ Ալիշան**, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ-Ս. Ղազար, 1910, էջ 102:

4 *Մատենագիրք հայոց*, հ. ԺԶ, ԺԱ. դար, էջ 202:

5 Արևորդիներին առաջին անգամ անդրադարձել է հայ լեզվաբան, գրաքննադատ Գրիգոր Վանցյանը (1870-1907) 1896 թ.: Հեղինակն իր եզրակացությունները կրկնել է նաև 1901 թ.: Ըստ նրա՝ արևորդիներն ազգությամբ հայ չեն, նրանք քրիստոնյա աղանդավորներ չեն, նրանց կրոնը չի կարելի նույնացնել զրադաշտականության հետ, իսկ առկա նյութերի հիման վրա դժվար է պարզել նրանց ծագումը. տե՛ս **Գրիգոր Վանցեան**, «Արևորդոց խնդիրը», *ՀԱ*, 1896, Յունուար, էջ 12-19, 1901, Փետրուար, էջ 42-44: Այս աղանդին է անդրադարձել նաև բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը (1927-2011)՝ հերքելով Վանցյանի եզրահանգումները և հոդվածի վերջում տալով թղթի ռուսերեն թարգմանությունը. **Р. М. Бартикян**, «Еретики Ареворди («сыны солнца») в Армении и Месопотамии и послание армянского католикоса Нерсеса Благодатного», *Эллинистический Ближний Восток, Византия и Иран. История и филология*, Москва,1967, сс. 102-108: Արևորդիների աղանդի մասին նաև ընդհանրական ակնարկ կա. տե՛ս **Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան**, «Արևորդիք. առաջին հայ աղանդը», *Էջմիածին*, 1978, Է, էջ 57-59:

սական քայլերի ու դարձի գալու ընթացակարգի մասին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ փորձել ենք Շնորհալու մեջբերած անդամագրության ծիսակարգը և երախայության՝ Ս. Մկրտության պատրաստության մանրամասները համեմատել նաև մեզ հասած Հնագույն Մաշտոցի, ձեռագիր և տպագիր մի քանի Մաշտոցների և խնդրի վերաբերյալ ժամանակի ընկալյալ մոտեցումների հետ:

Ս. Ներսես Շնորհալու այս նամակի գրության ստույգ թվականը հայտնի չէ, չի պահպանվել նաև վերջնամասը: Թղթի հասցեատերերն են Սամոսատ («Սամոստիա») քաղաքի քահանաները, Թորոս քորեպիսկոպոսը, Գազան անունով և մյուս տանուտերերը, որոնց սիրով ողջունում և հայրապետական օրհնություն է բաշխում Ս. Ներսես կաթողիկոսը «յաստուածընկալ սրբոյ նշանէս և ի սուրբ Լուսաւորչին Աջէս և աթոռոյս, զոր ևս միշտ ո՛ղջ պահեսցէ Տէր Աստուած յոգի և ի մարմին»[6]: Ինչպես տեսնում ենք, մյուս վավերագրերի նման այստեղ նույնպես հիշատակվում են սրբազան մասունքները և մասնավորապես Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը[7], որը դարերի ընթացքում դարձել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության վավերականության կնիքը: Եվ ահա վերոգրյալ մարդիկ նամակ են ուղարկել կաթողիկոսին՝ խնդրելով արևորդիներին ընդունել Հայոց Եկեղեցու գիրկը և «աղաչեն ի հաւատն Քրիստոսի խառնել զնոսա»[8]: Նույն խնդրանքը բանավոր երկրորդել են նաև աղանդավորները: Բնականաբար, Հայոց հայրապետն ուրախ և պատրաստակամ է նրանց ընդունելու հարցում՝ կարևորելով հատկապես հավատքի միությունը, «զի որպէս ազգաւ և լեզուաւ ի տոհմէ Հայոց են, յաւժարին, զի և հաւատով և հոգւով ի նոյն միաբանութիւն հաւասարեսցին ընդ նոսա»[9]: Շնորհալու այս տողերից պարզվում է, որ արևորդիներն էթնիկ հայեր են և հայախոս, իսկ ազգային և քրիստոնեական ինքնության առավել ամբողջականացման համար անհրաժեշտ է նաև հավատքի միությունը, որը Եկեղեցին պահանջում է նաև ամուսնացող զույգերից[10]: Ի վերջո՝ հավատքի միությունը ոչ միայն վարդապետական հիմնադրույթների ճանաչողությունն ու իմացումն է, այլև որոշակի մտածողություն և արժեքային համակարգ: Անհերքելի փաստ է նաև, որ քրիստոնեության ընդունումից և հատկապես Ս. Թարգմանիչ վարդապետների սխրանքից ու Ս. Վարդանանց պատերազմից հետո քրիստոնեական ինքնու-

---

6 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 160:

7 Աջի մասին տե՛ս **Իգիթ Ղարիբյան**, «Գրիգոր Լուսավորչի աջը», *«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ*, հուլիս Ա.-սեպտեմբեր Ա., 2003:

8 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 160:

9 Նույն տեղում, էջ 160-161:

10 **Արշակ Տեր-Միհեղյան**, *Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը*, Ս. Էջմիածին, 2007, էջ 464, *Համաբարբառ Կանոնագիրք հայոց*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020, էջ 712-714, հմմտ. **Կարապետ սարկ. Տէր Մկրտչեան**, *Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձուածային երևոյթներ Հայաստանի մէջ*, գերմաներէն բնագրէն թարգմանեց տօքթ. *Արտաշէս* ***Աբեղեան***, Երուսաղէմ, 1938, էջ 161:

թյունը դարձավ հայի և հայկականության հիմնական ցուցիչներից մեկը, իսկ Հայոց Եկեղեցին՝ այդ ինքնության պահապանն ու պաշտպանը[11]*, որի մասին են խոսում նաև մեր մատենագիրներն ու եկեղեցական հեղինակները*[12]*: Հենց այս տեսանկյունից պետք է հասկանալ Շնորհալու նախանձախնդրությունն ու նրբանկատությունն արևորդիների դարձի հարցում: Հավանաբար նրանք իրենց դավանած արժեքների, հեթանոսական կենցաղակերպի և մտածողության պատճառներով նաև մեկուսացած են եղել հասարակության լայն շերտերի հետ շփումներից, գուցե խնդիրներ ունեցել մյուս ազգակիցների հետ՝ Հայոց Եկեղեցուն անդամակցելու մեջ տեսնելով ամբողջական ինտեգրման և ինքնության պահպանման հնարավորություն:*

Ըստ նամակագիր կաթողիկոսի՝ արևորդիները չեն մկրտվել մեր հավատքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, քանզի «սիրեցին զխաւար և ո՛չ զլոյս մինչև ցայսաւր ժամանակի»[13]*: Շնորհալին արևորդիների մասին ոչ միայն տեղյակ է իրեն դիմած մարդկանց միջոցով, այլև որոշակի գրականություն է կարդացել աղանդի մասին և անձնական շփումներ ունեցել նրանց հետ: Ուստի որևէ հիմք չունենք այս հարցում չվաստահելու Ս. Ներսեսի նման շրջահայաց մատենագրի հայտնած տեղեկություններին*[14]*: Նա քաջատեղյակ է, որ արևորդիներն իրենց հավատալիքներով մոտ են պավլիկյաններին*[15] *(Հոռոմոց Պողոմելոսքն*[16]*), որոնք*

---

11 Ուստի պատահական չէ, որ անկախացումից հետո ընդունված ՀՀ Սահմանադրության մեջ հատուկ շեշտվում է այս հանգամանքը. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում». https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723:

12 **Սեյրան Ջամարյան**, *Հայոց ինքնության հիմնահարցեր*, Երևան, 2020, էջ 5-325, *Հայոց ինքնության հարցեր* 2, Երևան, 2014, էջ 6-43:

13 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 161:

14 **Р. М. Бартикян**, «Еретики Ареворди («сыны солнца») в Армении и Месопотамии и послание армянского католикоса Нерсеса Благодатного», с. 106:

15 Պավլիկյանների մասին տե՛ս **Բարսեղ Վ. Սարգիսեան**, *Ուսումնասիրութիւն Մանիքէա-պաւղիկեան թոնդրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացւոյ թուղթը*, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 5-105, **Կարապետ սարկ. Տէր Մկրտչեան**, *Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ*, էջ 1-141, 188-202, **Ստ. Տ. Մելիք-Բախշյան**, *Պավլիկյան շարժումը Հայաստանում*, Երևան, 1953, էջ 10-234, **Ե. Գ. Տեր-Մինասյան**, *Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից*, Երևան, 1968, էջ 114-148, **Վեր. Առէն Ա. Կէօրկիզեան**, *Պաւղիկեան-թոնդրակեցիներու շարժումը Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ է-րդ դարէն մինչև ԺԲ. դարը*, Պէյրութ, 1970, էջ 15-68, 104-125, **Ա. Մ. Օհանջանյան**, *«Բանալի ճշմարտության» երկը (պատմաբանասիրական և կրոնագիտական ուսումնասիրություն)*, Երևան, 2015, էջ 122-159, 177-190, **Карлен А. Мирумян**, *Армянская политическая мысль. Формирование и этапы развития*, Ереван, 2021, сс. 262-294:

16 Հրաչ Բարթիկյանն այս արտահայտությունը թարգմանել է «Բոգոմիլ» եզրույթով. **Р. М. Бартикян**, «Еретики Ареворди («сыны солнца») в Армении и Месопотамии и послание

նույնպես Ավետարանի լույսը չընդունեցին և չհնազանդվեցին առաքյալների քարոզությանը: Արևորդիների հանդեպ տածած հայրական սիրո և խնամքի արտահայտությունն են նաև Շնորհալի կաթողիկոսի Արևագալի ժամերգության հոգեպարար երգերն ու նշանավոր «Առաւոտ լուսոյ»-ն, որոնցում Քրիստոս փառաբանվում է որպես ճշմարիտ լույս և արեգակ[17]*: Իբրև իր հոտի հոգևոր միությանը նախանձախնդիր հայրապետ՝ Շնորհալին կարծում է, որ եթե արևորդիների զղջումն ու առ Աստված դառնալը սրտանց և կամավոր են, ապա այն ուրախություն է նաև Աստծու և հրեշտակների համար: Ինչպես երևում է թղթից, ոչ բոլորն են հավատացել այս աղանդավորների իրական դարձին և անգամ կասկածել նրանց սրտանց զղջմանը: «Իսկ եթէ ստութեամբ լինիցի դարձ նոցա, որպէս և կարծեն բազումք զնոցանէն, և դարձեալ անդրէն ի փսխածն իւրեանց դառնան, մեզ և ո՛չ մի ինչ է վնաս», — շարունակում է հայրապետը*[18]*: Քանի որ իր մոտ եկածները երդմամբ հրաժարվել են չար աղանդից, նախկին ընթացքից և հանձն առել կատարել առաջադրված բոլոր պայմանները, ապա որևէ խոչընդոտ չկա եկեղեցու գիրկը նրանց ընդունելու համար:*

Ապա Ս. Ներսես Շնորհալին նկարագրում է Հայոց եկեղեցուն անդամագրվելու կարգն ու ծիսագործնական քայլերը՝ հրապարակավ հրաժարում նախկին մոլորություններից և սատանայից, ուղղափառ հավատքի խոստովանություն, մուտք եկեղեցի, Ս. Մկրտություն և սրբալույս մյուռոնով օծում, որոնց հաջորդում են քահանաներին և նորադարձ քրիստոնյաներին ուղղված գործնական խորհուրդները: Բնականաբար, եկեղեցու գիրկն ընդունելու այս ընթացակարգը համահունչ պետք է լիներ այդ ժամանակ Ընդհանրական եկեղեցում և մասնավորապես Հայոց եկեղեցում ընդունվածի հետ, որոնցից էլ օգտվել է Շնորհալի հայրապետը՝ կտրականապես մերժելով կրկնամկրտությունը[19]*:*

армянского католикоса Нерсеса Благодатного», с. 109; հմմտ. **Ղևոնդ Ալիշան**, *Շնորհալի և պարագայ իւր*, Վենետիկ-Ս. Ղազար, 1873, էջ 401-402, **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան,** *Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած*, հ. Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, էջ 1667:

17 Ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանն (1865-1944) այս երգերում նշմարում է նաև նախաբրիստոնեական հետքեր. տե՛ս **Մանուկ Աբեղյան**, *Երկեր*, հ. Գ, Երևան, 1968, էջ 555-557, հմմտ. **Ն. Կ. Թահմիզյան**, *Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ*, Երևան, 1973, էջ 77, **Р. М. Бартикян**, «Еретики Ареворди («сыны солнца») в Армении и Месопотамии и послание армянского католикоса Нерсеса Благодатного», с. 103:

18 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 162:

19 Հայոց եկեղեցու կողմից կրկնամկրտության բացառիկ դեպքերից է, երբ Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը (946-968), խորհրդակցելով ժամանակի նշանավոր վարդապետների հետ, կարգադրում է քաղկեդոնական ծեսով մկրտվածներին վերամկրտել. տե՛ս **Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի**, *Տիեզերական պատմություն*, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ *Վ. Հ. Վարդանյանի*, Երևան, 2000, էջ 230, **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 1105-1106:

Արևորդի բոլոր տղամարդիկ, կանայք և մանուկները քահանաների հետ պետք է հավաքվեն քաղաքի մեծ եկեղեցու դռան մոտ: Եվ այս ամենը պետք է լինի սրտանց, կամավոր ու առանց պարտադրանքի: Ուստի նրանց պետք է հարցնել, թե կամենո՞ւմ են թողնել իրենց հայրերի մոլորությունները և հասնել ճշմարիտ աստվածգիտությանը: Երբ կամավոր ու սրտի հոժարությամբ երիցս ընդունեն և խոստովանեն սատանայի խաբեություններից հրաժարվելը, կդառնան դեպի Քրիստոս: Այս ժամանակ քահանաները կրկին երեք անգամ պետք է հարցնեն նրանց Ս. Մկրտությանը պատրաստվող երախաների նման, թե հրաժարվո՞ւմ են սատանայից, նրա բոլոր խորհուրդներից և այլն: Այնուհետև բացահայտ այս հրաժարումից հետո պետք է շրջվեն արևմուտք և ասեն. «Թքէք յերեսն սատանայի երիցս անգամ, և անարգեցէք զնա՝ որպէս պիղծ և զսուտ և զանիրաւ»[20]: Երբ Շնորհալու այս վերջին հորդորը համեմատում ենք Ժ-ԺԱ դարերից մեզ հասած Ս. Մկրտության հայկական ծեսի հնագույն տարբերակի հետ, այնտեղ չենք գտնում սատանայի վրա թքելու որևէ խրատ կամ ցուցում[21]: Բայց նման ծիսակարգ առկա է սատանայից հրաժարման բյուզանդական ծեսում, որն էլ վկայակոչում է Հայոց հայրապետը[22]: «Հրաժարիմք»-ի նման շեշտադրությունը և ծիսակարգի գործածումը հավանաբար կարելի է բացատրել երկու հանգամանքով. նախ՝ դրանով նախքան Ս. Մկրտությունը պարզորոշ առավել ընդգծվում էր ծիսական այս քայլը, երկրորդ՝ արևորդիների ապրած շրջաններում բյուզանդական ազդեցությունը մեծ էր, և ըստ այդմ՝ նման ծեսն ընկալելի և խորթ չէր նրանց համար:

Ծիսական այս քայլից հետո՝ նախքան ուղղափառ դավանության խոստովանությունը, Շնորհալու հորդորն է արևորդիներին, որ հրաժարվեն արեգակի և բարդի ծառի[23] հանդեպ ունեցած իրենց հավատալիքներից: Արեգակը սովո-

---

20 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 163:

21 Հմմտ. *Մայր Մաշտոց*, հ. Ա., գիրք Ա՝ ըստ հնագույն երկաթագիր ձեռագրերի և համեմատությամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական և կանոնացանկային յուրաքանչյուրի, աշխատասիրությամբ՝ ***Գէորգ Տէր-Վարդանեանի***, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2012, էջ 219:

22 Սատանայից հրաժարման ժամանակ նրա վրա թքելու խորհրդանշական այս սովորության վաղագույն վկայությունը պահպանվել է մեզ հասած կոստանդնուպոլսյան (բյուզանդական) ծագմամբ հայտնի «Բարբերինիի ծիսարանում» (Ը դ.), որը նախատեսված է եպիսկոպոսի և քահանայի համար: Այն ներառում է Ս. Պատարագի բնագրերը, ժամակարգության, եկեղեցու խորհուրդների աղոթքներն ու երգասացությունները, ծիսական տարբեր աղոթքներ, կարգեր, ինչպես նաև երախաների՝ սատանայից հրաժարվելու ծիսակարգի մանրամասները, որը հանդիսավորապես կատարել է Կ. Պոլսի պատրիարքն Ավագ Ուրբաթ. *L' Eucologio Barberini gr. 336 (ff. 1-263)*, edizione a cura di ***Stefano Parenti, Elena Velkovska*** (Bibliotheca «Ephemerides Liturgicae». «Subsidia» 80), Roma: C.L.V.-Edizioni Liturgiche, 1995, p. 143-145:

23 Մեզանում բարդի ծառի պաշտամունքը նախաքրիստոնեական հիմքեր ունի, որի տարբեր դրսևորումներն ենք տեսնում նաև Շնորհալու այս վկայությունից հետո պատմական Հայաս-

բական լուսատու է՝ նույնպես ստեղծված Աստծու կողմից: Նմանապես նաև բարդի ծառն է, որ չի տարբերվում Արարչի ստեղծած մյուս ծառերից: Շնորհալու գրվածքից նաև պարզ է դառնում, որ ըստ արևորդիների՝ հենց այս ծառի փայտից էր նաև Քրիստոսի խաչափայտը:

Այնուհետև արևորդիները քահանաների ներկայությամբ պետք է շրջվեն դեպի արևելք՝ աստվածգիտության ճշմարիտ լույսը, և բարձրաձայն ասեն հավատքի ուղղափառ խոստովանությունը[24]: Շնորհալին թղթում բերում է Հավատո հանգանակի երկար բնագիրը, որը տարբերվում է այդ ժամանակ Հայոց եկեղեցում ընդունված և մեզ հասած տարբերակներից[25]: Այն բաղկացած է երկու

տանի տարբեր վայրերում. տե՛ս **Լիլիթ Սիմոնյան**, *Ծառ ծաղկաքաղիկ*, Երևան, 2017, էջ 257-259: Արեգակի, ծառի այս պաշտամունքով արևորդիները նմանվում են պավլիկյաններին, որի մասին է խոսում նաև Ս. Հովհան Օձնեցին «Ընդդէմ Պաւղիկեանց» գործում. *Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք*, Վենետիկ, 1833, էջ 35, 37-38: Հավանաբար այս և այլ նմանություններն են պատճառը, որ մեր մատենագիրները նմանեցրել և զուգահեռներ են անցկացրել արևորդիների և պավլիկյանների միջև:

24 Հայոց եկեղեցու ծիսական կյանքում գործածում ենք Հավատո երեք հանգանակ՝ Նիկիակոստանդնուպոլսյանը կամ Նիկիական հանգանակը, որն ամեն անգամ բարձրաձայն ասում ենք Ս. Պատարագի ընթացքում, երկրորդ՝ «Ժամագրքի» սկզբում զետեղված և Ս. Գրիգոր Տաթևացու խմբագրած «Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ» սկսվածքովը, և երրորդ՝ Ս. Մկրտության ժամանակ ասվող հավատքի համառոտ կամ ընդարձակ խոստովանությունը. տե՛ս *Խորհրդատետր Սրբոյ Պատարագի՝ ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ*, Վաղարշապատ, 1880, էջ 9, *Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ*, Ս. Էջմիածին, 2016, էջ 11-13, *Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս՝ ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց*, Վաղարշապատ, 1905, էջ 20, 22-23: Մեր եկեղեցում գործածվող Հավատամքների մասին տե՛ս **Հ. Յովսէփ վ. Գաթըրճեան**, *Հանգանակ հաւատոյ, որով վարի Հայաստանեայց եկեղեցի*, Վիէննա, 1891, էջ 1-49, **Զարեհ արք. Ազնաւորեան**, *Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հաւատամքին*, խմբագիր՝ ***Վաղինակ վրդ. Մելոյեան***, Հալէպ, 2008, էջ 19-441:

25 Մեզ հասած Ս. Մկրտության ծեսի հնագույն բնագրում պահպանվել է Հավատո հանգանակի երկու տարբերակ. կարճը՝ հարցուպատասխանի ձևով, և ընդարձակը՝ Նիկիական հանգանակը: Սա փաստում է, որ Ս. Մկրտության խորհրդակատարության ժամանակ ոչ միայն պահանջվել է տվյալ մկրտվողի հավատքի անհատական խոստովանությունը, որի մասին են վկայում նաև գործածվող եզակի թվով բայաձևերը, այլև արարողության ներկաներինը: Հավատքի խոստովանության այս ձևը պահպանվել է մինչև ԺԷ դար՝ ներառյալ Մաշտոցի 1667 թ. ոսկանյան առաջին հրատարակությունը, իսկ ԺԸ-ից սկսած՝ տպագիր Մաշտոցներում այլևս չկա հավատքի խոստովանության հարցուպատասխանի ձևը, փոխարենը դրված է Հավատամքի համառոտ մի տարբերակ: Մինչև ԺԶ դարը գրված ձեռագիր մի շարք Մաշտոցներում պահպանվել է համառոտի մեկ այլ տարբերակ նույնպես, որում հավելյալ շեշտվում են Քրիստոսի հրաշքները, պայծառակերպվելը, դժոխք իջնելը և այլն. տե՛ս օրինակ՝ ձեռ. ՄՄ 826, (ԺԴ դ.), թ. 231ա-բ, ՄՄ 10122, (ԺԴ դ.), թ. 18բ, ՄՄ 5902, (ԺԵ-ԺԶ դդ.), թ. 5ա-բ: Այժմ Հայոց եկեղեցու ծիսական կյանքում ընդհանրացած և կանոնականացված Հավատամքի համառոտ տարբերակի հիմքը շնչին տարբերությամբ 1704 թ. տպագիր Մաշտոցն է. *«Հաւատամք յամենասուրբ Երրորդութիւնն՝ ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգի, զաւետումն Գաբրիէլի, զծնունդն Քրիստոսի, զմկրտութիւնն, զչարչարանսն, զխաչելութիւնն, զաստուածապէս համբար-*

մասից. նախ՝ Ս. Երրորդության դավանանքի խոստովանությունն է, «որ է երեք անձնաւորութիւն և մի աստուածութիւն և մի բնութիւն և մի զաւրութիւն և մի իշխանություն, որով եղեն յոչնչէ ամենայն արարածք բանիւ նորա՝ երևելիք և աներևոյթք»[26]*: Եվ երկրորդ՝ ընդգծվում է Քրիստոսի մարդեղության խորհրդի նշանակությունը մարդու փրկագործության համատեքստում՝ անդրադառնալով Տիրոջ մկրտությանը, Ս. Երրորդության հայտնությանը նույն մկրտության ժամանակ, սատանայից փորձվելը, Նրա բժշկումները, հրաշքները, խաչելությունը, գերեզման իջնելն ու դժոխքից մարդկանց փրկելը, հրաշափառ հարությունը, համբարձումը, երկրորդ գալուստը և վերջին դատաստանը*[27]*: Հարկ է արձանագրել, որ հավատքի այս խոստովանությունը բնիկ հայկական ծեսի նման հարցուպատասխանի ձևով է: Բայց եթե Հնագույն Մաշտոցում խոստովանությունն անհատական է («հաւատա՞ս»), ապա այստեղ ընդհանրական («հաւատա՞յք»)*[28] *բնույթ ունի: Կարելի է ենթադրել, որ ինչ-որ մեկը բարձրաձայն կարդացել է Հավատո հանգանակը, իսկ բոլորը միասնական պատասխանել են՝ հավատում ենք: Շնորհալիական այս Հավատամքն ավետարանական ճշմարտությունների խտացյալ բանաձևումն է, իսկ գործածված բառամթերքը և կառուցվածքը շատ նման են Երզնկայի դպրոցի նշանավոր րաբունապետներից Կիրակոս Երզնկացու († 1375) խրատներում պահպանված հավատքի խոստովանությանը և Ս. Գրիգոր Տաթևացու († 1409) խմբագրածին*[29]*:*

Սատանայից հրաժարվելուց և Հավատքի ուղղափառ դավանության խոստովանությունից հետո, որը Եկեղեցի մտնելու խորհրդական դուռն է և առաջին նախապայմանը, դարձի եկածներն արդեն կարող են մտնել բուն եկեղեցին: Հայոց հայրապետը հորդորում է չմկրտվածներին երախայացնել, այսինքն՝ պատրաստել Ս. Մկրտությանը՝ մատնանշելով հետագա քայլերը: Զափահասները պետք է ապաշխարության որոշակի շրջան անցնեն մկրտվելուց առաջ, իսկ մա-

---

ձումն, զնստիլն ընդ աջմէ Հօր, զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և հաւատամք». տե՛ս *Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս*, Վաղարշապատ, 1905, էջ 20: Նշենք, որ հավատքի խոստովանության համառոտ և ընդարձակ տարբերակները պահպանվել են նաև 18-20-րդ դարերի տպագիր Մաշտոցներում: Ս. Մկրտության ծեսի վերջին բարեփոխված տարբերակում, որը հաստատվեց 2014 թ. նոյեմբերի 11-13-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած Եպիսկոպոսաց ժողովում, դրված է միայն Հավատո հանգանակի համառոտ տարբերակը՝ ելնելով եկեղեցու ծիսագործնական կյանքից. *Մաշտոց, յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս՝ ըստ սահմանադրութեան սուրբ եկեղեցւոյս*, Դ. հրատարակութիւն, Անթիլիաս, 2022, էջ 26:

26 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 164:

27 Նույն տեղում, էջ 165:

28 Նույն տեղում, էջ 164, *Մայր Մաշտոց*, հ. Ա., գիրք Ա., էջ 219:

29 **Զաքարիա աբեղա Բաղումյան**, «Կիրակոս վարդապետ Երզնկացու խրատները մեղրեի խոստովանության մասին», *Էջմիածին*, 2012, Գ, էջ 76-77, *Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ*, էջ 11-13:

նուկներին հարկ է անմիջապես մկրտել։ Արտահայտելով անդամագրության վերաբերյալ Հայոց Եկեղեցու տվյալ ժամանակաշրջանի դիրքորոշումը՝ Ս. Ներսես Շնորհալին պատվիրում է նախապես մկրտված արևորդիներին եկեղեցու ծոցն ընդունել մեղքերի խոստովանության միջոցով՝ նրանց համար սահմանելով նաև ապաշխարության որոշակի շրջան, որից հետո ճակատները և գգայարանները դրոշմել սրբալույս մյուռոնով՝ ասելով. «Յանուն Հաւր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»[30]։ Յավոք, Շնորհալին չի մանրամասնում, թե ժամանակին մկրտված այս արևորդիները քրիստոնեական ո՞ր եկեղեցու կամ հարանվանության անդամ էին։ Այնուամենայնիվ, բերված ծիսակարգը նման է խնդրի վերաբերյալ այդ ժամանակ գործածվող Ընդհանրական եկեղեցու ընկալյալ մոտեցմանը, այն է՝ այլադավաններին (իմա՛ հերձվածողներին և հերետիկոսներին) եկեղեցու գիրկն ընդունել նզովքից, ուղղափառ դավանության հրապարակային խոստովանությունից հետո՝ դրոշմելով և հաղորդելով Տիրոջ մարմնին և արյանը[31]։ Նման ընթացակարգն էլ ցույց է տալիս, որ արևորդիները ոչ միայն հեռացել էին քրիստոնեության բուն ճշմարտություններից, այլև շեղվել ուղղափառությունից։ Ի տարբերություն Շնորհալու կաթողիկոսության շրջանի և Կիլիկյան Հայաստանի հոգևոր-քաղաքական իրադրության, երբ փորձ էր արվում քաղկեդոնադավան եկեղեցիների հետ նմանատիպ խնդիրները լուծել երկխոսության, միմյանց ավանդությունները ճանաչելու միջոցով և միության հասնելու ձգտման տեսլականով, կրկնամկրտության կամ եկեղեցուն անդամագրության խնդիրն ավելի սուր էր բուն Հայաստանում և հատկապես հայ-վրացական եկեղեցական հարաբերություններում։ Այս խնդիրներին է անդրադարձել ԺԲ-ԺԳ դարերի կանոնագետ վարդապետ Մխիթար Գոշը «Թուղթ առ Վրացիսն» երկում՝ այլադավաններին եկեղեցու գիրկն ընդունելու հարցում՝ երկրորդելով Շնորհալուն և ավելի մանրամասնելով հարցը[32]։

---

30 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 166:

31 Հետաքրքիր է, որ պավլիկյաններին Օրթոդոքս եկեղեցու գիրկն էին ընդունում վերամկրտությամբ, որի մասին է 692 թ. Տրուլլոյի ժողովի Ղե կանոնը. *The Council in Trullo revisited*, edited by ***George Nedungatt, Michael Featherstone*** (Kanonika 6, Pontificio Istituto Orientale), Roma, 1995, p. 175:

32 **Շահե ծ. վրդ. Անանյան**, «Մխիթար Գոշը և այլադավանների մկրտության խնդիրը Հայոց եկեղեցում», *ԲՄ* № 31, 2021, էջ 85-101: Այլադավաններին՝ քաղկեդոնականներին և բողոքականներին, Հայոց եկեղեցու գիրկն ընդունելու կանոնական վերջին որոշումը և կարգը սահմանել է Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան (1892-1907) կաթողիկոսը 1905 թ. հուլիսի 16-ի կոնդակով: Ըստ կոնդակի՝ անխտիր պետք է ընդունել մեր եկեղեցի դիմած թե՛ հայ և թե՛ օտար մարդկանց: Ոչ մի դեպքում նրանց չի կարելի վերամկրտել, քանզի Հայոց եկեղեցին մերժում է կրկնամկրտությունը: Վեհափառը մեջբերում է նաև անդամագրության ծիսակարգը, որը վերցված է Ավագ Հինգշաբթի կատարվող Ապաշխարողաց կարգից. *Կաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան*, Գիրք Է՝ *Խրիմեան Հայրիկը և ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.)*, Երևան, 2000, էջ 339:

Հայոց Եկեղեցուն ամբողջական անդամագրության կարգը սահմանելուց հետո Շնորհալին բարոյախրատական հորդորներ է տալիս նորադարձներին՝ հեռու մնալ զանազան մեղքերից և խոտելի երևույթներից՝ սպանությունից, շնությունից, պոռնկությունից, գողությունից, ընկերների հանդեպ նենգությունից, նախանձից, հարբեցողությունից և սատանայի չար այլ գործերից: Այսուհետ նրանք պետք է ապրեն քրիստոնեավայել և Աստծու կամքի համաձայն՝ լինելով եղբայրասեր, սրբասեր ու ողորմած: Քրիստոնյա արևորդիներին Շնորհալին պատվիրում է չգայթակղվել քահանաների պահվածքից, «այլ ի լաւսն և յընտիրսն հայեսցին, և յայնցանէ առցեն իւրեանց աւրինակ բարեաց»[33]*: Վատ քրիստոնյա լինելու պատճառը ոչ թե Աստծու օրենքն է, այլ նրանց ծուլությունը, անմտությունը և սատանան:*

Հայոց կաթողիկոսը քահանաներին հատուկ պատվիրում է զգուշացնել կանանց՝ հեռու մնալ «ի կախարդութենէ և ի դեղատուութենէ[34] *և յամենայն դիւական աղանդաւորութենէ»*[35]*, քանզի «ամենայն ոք, որ կախարդութեան զհետ երթայ, դիւաց է պաշտաւնեայ և երկրպագու. որ առնէ և որ առնել տայ, այնպիսին ո՛չ հաղորդի է արժանի և ո՛չ թաղման քրիստոնէից»*[36]*: Շնորհալին նույն պատվերն է կանանց տալիս նաև նշանավոր «Թուղթ ընդհանրական»-ում. «Մի՛ ոք ի ձէնջ սատանայական կախարդութեան և աղանդոց դեղատուութեան զհետ երթիցէ, զի այլ մեղք ի գործսն է վնասն, և այդ ի հաւատն, քանզի կախարդութիւնն ի սատանայէ է»*[37]*: Հեղինակը նույն խստությամբ է արտահայտվում նաև գուշակությունների նպատակով քրիստոնյաների կերակրի, ըմպելիքի մեջ պիղծ և աղտեղի բաներ խառնողների մասին, որոնք հեռանում են Աստծուց և Ս. Հաղոր-*

---

33 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 166:

34 Հետաքրքիր է բնագրում կախարդության ձևերից «դեղատուութեան» հիշատակումը, որը տարածված է եղել ինչպես Հայաստանում, այնպես էլ Աղվանքում: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ Վաչագան Գ Բարեպաշտը (Ե-Զ դդ.) անտեղիտալի պայքար է մղել դեղատուների և մատնահատների աղանդների դեմ, որոնք մարդկանց մարդասպանության էին հասցնում՝ մահադեղ տալով: Դեղատուները նաև զանազան խուկներ կամ դեղեր էին պատրաստում գուշակության նպատակով: Մեր ժողովրդի մեջ արմատացած հեթանոսական այս ծեսերի, պատկերացումների և սովորույթների դեմ է պայքարել իր գրվածքներով նաև Շնորհալու ժամանակակից, միջնադարի խոշոր աստվածաբան Վարդան Այգեկցին, տե՛ս *Մատենագիրք հայոց*, հ. ԺԵ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 86-91, **Վարդան Այգեկցի**, *Խրատներ*, Երևան, 1999, էջ 119, նաև՝ **Լևոն Խաչիկյան**, *Աշխատություններ*, հ.Ա, Երևան, 2012, էջ 17-20, **Հ. Ղևոնդ Ալիշան**, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, էջ 387-437: Սնահավատության և կախարդության տարատեսակները պահպանվել են նաև մեր օրերում, երբ եկեղեցուց մեռոնաջուր, օրհնված խաչ, մոմ կամ ջուր են խնդրում, որոնցից բախտագուշակները «բուժիչ դեղ» են պատրաստում:

35 *Մատենագիրք հայոց*, հ. ԻԲ., էջ 166:

36 Նույն տեղում, էջ 166-167:

37 Նույն տեղում, էջ 130:

դությունից զրկվում։ Կռապաշտության և կախարդության տարբեր տեսակներից հեռու մնալու Շնորհալու այս անդրդվելի կեցվածքը, հորդորներն ու պատիժները վկայում են առհասարակ նաև քրիստոնյա հայերի շրջանում տարածված հեթանոսական սովորությունների մասին, որոնց դեմ մշտապես պայքարել և պայքարում են Հայոց Եկեղեցու վարդապետները։

Բոլոր զգուշացումներից և հայրական հորդորներից հետո Ս. Ներսես Շնորհալին նաև որոշակի կանոններ է սահմանում Եկեղեցու նորադարձ բոլոր անդամների համար՝ տարվա ընթացքում պարտադիր երկու կամ երեք անգամ, որոշ դեպքերում՝ նաև ավելի շատ, գործած մեղքերը խոստովանել քահանաների առաջ, հոգևորականների կողմից դրված ապաշխարանքը կատարել պահքով, աղոթքով և ողորմությամբ։ Բայց միայն մեղքերի խոստովանությունը դեռ բավարար չէ ճշմարիտ քրիստոնեական ապրելակերպի համար։ Ուստի նորադարձները մյուս քրիստոնյաների նման պետք է մասնակցեն նաև Եկեղեցու ընդհանրական աղոթքին՝ խնդրելով մեղքերի քավություն, արժանի լինելու երկնքի արքայությանը, փրկվելու գեհենի տանջանքներից, հեռու մնալով սատանայի բոլոր փորձություններից և վտանգներից։ Շնորհալի հայրապետը կարևորում է նաև կանոնական պահքերի պահպանումը մյուս քրիստոնյաների նման, ինչպես նաև Ս. Գրքի ուսուցումը։

Ինչպես պարզվում է թղթից, Շնորհալին իր մոտ եկած պատգամավորների հետ խոսել է նաև արևորդիների զավակների համար Աստվածաշնչի սերտողություն կազմակերպելու, իսկ արժանիներին անգամ քահանայագործելու պատվին արժանացնելու մասին, որոնց նրանք սիրով համաձայնել են։ Այստեղ հայրապետը մեջբերում է մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի օրինակը, որ քրմերի զավակներին քահանայեցրեց և եպիսկոպոսներ ձեռնադրեց[38]։ Գիտակցելով քահանաների վրա դրված ծանր լուծն ու արևորդիների՝ Եկեղեցուն անդամագրվելու գործընթացի բարդությունները՝ Շնորհալի հայրապետը քաջալերում է նաև քահանաներին, որոնց վարձն Աստծուց է։ Նա հույս է հայտնում, որ Ս. Մկրտությունից հետո իրենց արևորդիներ անվանողներն այսուհետ «փոխեսցեն և ի Քրիստոսի մեծ և սքանչելի անունն անուանեսցին՝ քրիստոնեայք, զոր սուրբ առաքեալքն հաւատացելոցն ի Քրիստոս՝ եդին զանունս զայս ի մեծ Անտիոք»[39]։ Ինքն էլ իր հերթին խոստանում է Աստծուն աղոթել նոր քրիստոնյաների համար, որպեսզի հաստատվեն հավատքի ժայռի վրա, որին չեն կարող հաղթել սատանան ու նրա արբանյակները։ Թղթի վերջում Ս. Ներսես հայրապետը հույս է հայտնում, որ հոգևորականները ժողովրդին կուսուցանեն և կխրատեն

---

38 *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց*, աշխատութեամբ **Գ. Տէր-Մկրտչեան** և **Ստ. Կանայեանց**, Տփղիս, 1909, էջ 441-442։

39 Նույն տեղում, էջ 168։

Աստվածաշնչով՝ հորդորելով նրանց գումար չպահանջել նորադարձներից մկրտվելու, մեղքերի խոստովանության, Ս. Հաղորդության, թաղման և բերքահավաքի համար, այլ ինչ-որ կամավոր տան, այն վերցնեն, խրատեն ոչ թե ստությամբ, այլ հեզությամբ[40]*:*

Միով բանիվ՝ Ս. Ներսես Շնորհալու այս թուղթը ոչ միայն կարևոր սկզբնաղբյուր է Արևորդիների աղանդի, Հայոց եկեղեցուն նրանց անդամակցելու ծիսագործնական քայլերի ու ժամանակի աստվածաբանական ընկալումների մասին, այլև պարտադիր ուսանելի հովվական տեսանկյունից՝ մեկ այլ կողմից բացահայտելով իր հոտի միասնությանն ու հավատքի միությանը նախանձախնդիր իմաստուն հայրապետին ու սիրող հորը:

PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN

MEMBERSHIP IN THE ARMENIAN CHURCH ACCORDING TO ST. NERSĒS GRACIOUS' LETTER "ON THE CONVERSION OF THE SONS OF THE SUN"

Key words: St. Nersēs the Gracious, Sons of the Sun, Paulicians, Holy Baptism, Armenian Church, Renunciation of Satan, Confession of Faith, Membership, Identity.

St. Nersēs the Gracious' famous epistle "Conversion of the Sons of Sun" is a singular source, rare in its treatment of the identity of this abstruse religious sect. The letter reveals that the clergy of the city of Samosata, including representatives of the Sons of the Sun, appealed to the Armenian Patriarch to accept them into the Armenian Church. According to St. Nersēs, the Sons of Sun are ethnic Armenians who were not baptized by St. Gregory the Illuminator, instead resembling the Paulicians in terms of dogma.

St. Nersēs describes in detail the order of acceptance into the Armenian Church and the necessary liturgical steps: public renunciation of Satan and of all previous delusions, confession of the orthodox faith, entrance into the church, Holy Baptism and, finally, the anointing the neophyte with Holy Myron. This section of the letter is followed by the issuance of practical advice for priests and the newly baptized.

---

40 Ս. Ներսես Շնորհալին նույն պատվերն է տալիս քահանաներին նաև «Թուղթ ընդհանրական»-ում. «Եւ մի՛ ոք ի ձէնջ ըստ հարկի պահանջեսցէ գինս արծաթոյ անգին շնորհին վասն մկրտութեանն կամ մահու հաղորդի տալոյ, այլ որ ունին և տան սիրով, որպէս զնուէր եկեղեցւոյ՝ առէք, և որ աղքատ լինին՝ մի՛ բռնադատէք». *Մատենագիրք հայոց*, ԻԲ. հատոր, էջ 105-106: Նույն հորդորով է քահանաներին դիմում նաև Հովհաննես Երզնկացի Պլուզը († 1293) «Խրատ հասարակաց»-ում. **Է. Մ. Բաղդասարյան**, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը*, Երևան, 1977, էջ 151:

In the article, the liturgical steps and the process of acceptance into the Church cited by St. Nersēs the Gracious, are compared with the ancient baptismal rite of the Armenian Church, several handwritten and printed Mashtots‘ and the accepted theological approaches to the issue of the time. The letter once again reveals the character of the spiritual and beloved father who is zealous in fostering the unity of his flock and the union of the faith.

ПРОТОАРХИМАНДРИТ ЗАХАРИЯ БАГУМЯН

ПРИНЯТИЕ В ЛОНО АРМЯНСКОЙ ЦЕРКВИ СОГЛАСНО ПОСЛАНИЮ СВ. НЕРСЕСА БЛАГОДАТНОГО «ОБ ОБРАЩЕНИИ СЫНОВ СОЛНЦА»

Ключевые слова: Св. Нерсес Благодатный, сыны солнца, павликиане, Святое Крещение, Армянская Церковь, отречение от сатаны, исповедование веры, идентичность.

Известное послание Святого Нерсеса Благодатного «Об обращении сынов солнца» – один из редких армянских источников, содержащих сведения об этой ереси. Духовенство, представители сынов солнца и другие жители города Самосаты обратились к Армянскому Католикосу с просьбой принять их в лоно Церкви. Согласно Св. Нерсесу Благодатному, сыны солнца – этнические армяне, говорящие на армянском языке, которые не были крещены Святым Григорием Просветителем; по своим верованиям они были близки к павликианам.

Св. Нерсес в своем послании подробно описывает порядок оглашения и воцерковления: публичное отречение от прежних заблуждений и сатаны, исповедание православной веры, вхождение в церковь, Святое Крещение и Миропомазание, за которыми следуют практические наставления священникам и новообращенным.

Описанные в послании Св. Нерсеса Благодатного ступени воцерковления сопоставлены с сохранившимся древнейшим чином Святого Крещения, некоторыми рукописными и печатными Требниками и богословскими воззрениями данного времени. В послании перед нами вновь предстает образ духовного отца, любящего свою паству и неустанно трудящегося ради ее единства и единства веры.